ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴԵՂՈՐԱՅՔԻ ԵՎ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-20/027/1

ք. Երևան «5» Հոկտեմբեր 2020թ.

«ՀՀ պետական եկամուտների կոմիտե»-ն ի դեմս գլխավոր քարտուղար Էդգար Գևորգյանի, որը գործում է «ՀՀ պետական եկամուտների կոմիտե»-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և Ա/Ձ «Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի»-ն, ի դեմս տնօրեն Դավիթ Հովհաննիսյանի, որը գործում է Ա/Ձ «Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի»-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի,

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 189,750 (հարյուր ութսունինը հազար յոթ հարյուր հիսուն) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին:

Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե	Ա/Ձ «Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի»
ք.Երևան, Մ. Խորենացի 3,7	ք. Երևան, Կոմիտասի պող. 56-46
ՀՎՀՀ 02647057	ԱյԴի բանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011054013	Հ/Հ 11813012607100
ՀՀ ՖՆ աշխատակազմի	ՀՎՀՀ 20179887
գործառնական վարչություն	Տնօրեն
Գլխավոր քարտուղար	
Է. Գևորգյան _____ /ստորագրություն/ Կ.Տ/	Դ. Հովհաննիսյան _____ /ստորագրություն/ Կ.Տ/

Հավելված N 1
« 5 » Հոկտեմբեր 2020թ. կնքված
ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-20/027/1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
								հասցեն	ենթակա քանակը	ժամկետը
2	33631281/3	Ականջի և աչքի Կաթիլներ FLOXADEX	**<<FLOXADEX>> Ֆիրմայի** Առաջարկվող ապրանքը նախատեսված է աչքերիի և ականջների բորբոքումների բուժման համար Դեղաձևը: ականջի և աչքի դեղակախույթ-10մլ	հատ	2300	16,100	7	ք. Երևան, Էրեբունի վարչական շրջան, Հյուսիսային 6 ՀՀ ՊԵԿ ՄԴՊՎ Շնագիտական /կենտրոն/ բաժին	7	Մատակարարում ն իրականացվում է Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում
5	33631281/6	Վերականգնողակ ան քսուք SOLCOSERYL 20գ	**<<SOLCOSERYL 20գ>> Ֆիրմայի** Դեղամիջոց վնասվածքների, վերքերի, քերծվածքների, այրվածքների բուժման համար Դեղաձևը-քսուք, արտաքին կիրառման-20գր.	հատ	1642.85	11,500	7	ք. Երևան, Էրեբունի վարչական շրջան, Հյուսիսային 6 ՀՀ ՊԵԿ ՄԴՊՎ Շնագիտական /կենտրոն/ բաժին	7	Մատակարարում ն իրականացվում է Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում
6	33631281/7	Հակաբորբոքային քսուք LEVOMIKOL	**<<LEVOMIKOL>> Ֆիրմայի** Հակաբորբոքային քսուք վերքերի արագ բուժման համար Դեղաձևը-քսուք, արտաքին կիրառման-25գր.	հատ	1150	11,500	10	ք. Երևան, Էրեբունի վարչական շրջան, Հյուսիսային 6 ՀՀ ՊԵԿ ՄԴՊՎ Շնագիտական /կենտրոն/ բաժին	10	Մատակարարում ն իրականացվում է Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում
7	33631281/8	Վերականգնող միջոց ACTOVEGIN	**<<ACTOVEGIN>> Ֆիրմայի** Դեղամիջոցն ակտիվացնում է նյութափոխանակությունը հյուսվածքներում, նվազեցնում է հյուսվածքների հիպոքսիան, բարելավում է տրոֆիզմը և խթանում է վերարտադրողական գործընթացը: Դեղաձևը-լուծույթ, ներարկման-2մլ	հատ	644	16,100	25	ք. Երևան, Էրեբունի վարչական շրջան, Հյուսիսային 6 ՀՀ ՊԵԿ ՄԴՊՎ Շնագիտական /կենտրոն/ բաժին	25	Մատակարարում ն իրականացվում է Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում

8	33641220/1	Հորմոնալ միջոց էգ շների համար LAKTO-STOP	**<<LAKTO-STOP >> <<Api-San>> Ֆիրմայի** Դեղամիջոցի օգտագործումը թույլ է տալիս խթանել հիպոտոլամիկ-հիպոթենային համակարգի դոպամին ընկալիչների գործունեությունը: Այն կանխում է կաթնագեղձերից կաթի արտադրությունը: Նախատեսված է արտաքին կիրառման համար-15մլ	հատ	12,000	60,000	5	ք. Երևան, Էրեբունի վարչական շրջան, Հյուսիսային 6 ՀՀ ՊԵԿ ՄԴՊՎ Շնագիտական /կենտրոն/ բաժին	5	Մատակարարում ն իրականացվում է Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում
9	33611341/1	Իմունային համակարգը վերականգնող միջոց ՎԻՏԱՄԻՆ Բ ՀԱՄԱԼԻՐ	**<<ՎԻՏԱՄԻՆ Բ ՀԱՄԱԼԻՐ>>** Միջոցը կիրառվում է վիտամինների պակասության դեպքում և տարբեր նյարդային համակարգի հիվանդությունների դեմ: Դեղաձևը-լուծույթ, ն/ե և մ/մ ներարկման-2մլ	հատ	180	12,600	70	ք. Երևան, Էրեբունի վարչական շրջան, Հյուսիսային 6 ՀՀ ՊԵԿ ՄԴՊՎ Շնագիտական /կենտրոն/ բաժին	70	Մատակարարում ն իրականացվում է Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում
10	33611341/2	Սրտանոթային և նյարդային համակարգը կարգավորող միջոց ՎԻՏԱՄԻՆ Բ1	**<<ՎԻՏԱՄԻՆ Բ1 >>** Միջոցն անհրաժեշտ է օրգանիզմի նյութափոխանակության, նյարդային բջիջների բնականոն աշխատանքի և սրտանոթային և աղեստամոքսային համակարգի կարգավորման համար: Դեղաձևը: լուծույթ, ն/ե և մ/մ ներարկման-1մլ	հատ	30	1200	40	ք. Երևան, Էրեբունի վարչական շրջան, Հյուսիսային 6 ՀՀ ՊԵԿ ՄԴՊՎ Շնագիտական /կենտրոն/ բաժին	40	Մատակարարում ն իրականացվում է Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում
11	33611341/4	Նյութափոխանակությունը կարգավորող միջոց ՎԻՏԱՄԻՆ Ց	**<<ՎԻՏԱՄԻՆ Ց>>** Միջոցն անհրաժեշտ է օրգանիզմում բազմաթիվ նյութափոխանակության ռեակցիաների բնականոն ընթացքի համար: Նաև այս նյութը ունի հակաթույն և արտահայտված հակաօքսիդիչ հատկություններ: Դեղաձևը: լուծույթ, ն/ե և մ/մ ներարկման-2մլ	հատ	80	2400	80	ք. Երևան, Էրեբունի վարչական շրջան, Հյուսիսային 6 ՀՀ ՊԵԿ ՄԴՊՎ Շնագիտական /կենտրոն/ բաժին	80	Մատակարարում ն իրականացվում է Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում
12	33141164/1	Արյունահոսությունը կանխող միջոց VIKASOL	**<<VIKASOL>> Ֆիրմայի** Կիրառվում է տարբեր տեսակի ներքին արյունահոսության ժամանակ: Դեղաձևը-լուծույթ ն/ե և մ/մ ներարկման-1մլ	հատ	90	4500	50	ք. Երևան, Էրեբունի վարչական շրջան, Հյուսիսային 6 ՀՀ ՊԵԿ ՄԴՊՎ Շնագիտական /կենտրոն/ բաժին	50	Մատակարարում ն իրականացվում է Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում
16	33631284/2	Հակաալերգիկ միջոց DEXAMETAZONE	**<<DEXAMETAZONE>> Ֆիրմայի** Առաջարկվող դեղամիջոցը սինթետիկ ֆտորացված գլյուկոկորտիկոստերոիդ է, ունի հակաբորբոքային, հակաալերգիկ, իմունային ճնշող ազդեցություններ, ունի հակաօքսիդիչ	հատ	100	5000	50	ք. Երևան, Էրեբունի վարչական շրջան, Հյուսիսային 6	50	Մատակարարում ն իրականացվում է Պայմանագիրը ուժի մեջ մտնելու

			և հակաֆիբրոբլաստոգեն հատկություններ: Դեղաձևը՝ լուծույթ, միջմկանային և երակային ներարկման-1մլ					ՀՀ ՊԵԿ ՄԴՊՎ Շնագիտական /կենտրոն/ բաժին		օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում
17	33631284/3	Հակաալերգիկ միջոց TAVEGYL	**<<TAVEGYL>> Ֆիրմայի** Դեղամիջոցն ունի ուժեղ հակագիստամինային և հակաքորային ազդեցություն: Հակաալերգիկ ազդեցություն ունենալով՝ այն նվազեցնում է արյան անոթների, մազանոթների թափանցելիությունը, խանգարում է արտանետմանը և այտուցների առաջացումը, նվազեցնում է քորի առաջացումը Դեղաձևը-հաբ	հատ	180	18,000	100	ք. Երևան, Էրեբունի վարչական շրջան, Հյուսիսային 6 ՀՀ ՊԵԿ ՄԴՊՎ Շնագիտական /կենտրոն/ բաժին	100	Մատակարարում ն իրականացվում է Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում
18	33631284/4	Հակաալերգիկ և քնաբեր միջոց DIMEDROL	**<<DIMEDROL>> Ֆիրմայի** հակահիստամինային ակտիվ դեղանյութ: Վերացնում է հիստամինից առաջացած հարթ մկանների կծկումը, իջեցնում մազանոթների թափանցելիությունը, կանխում ալերգիական ռեակցիան: Օժտված է նաև ընդհանուր հանգստացնող, հակաբորբոքային սպազմոլիտիկ հատկություններով: Օգտագործվում է ալերգիական և կենտրոնական նյարդային համակարգի որոշ հիվանդությունների դեպքում Դեղաձևը-լուծույթ, ներարկման-1մլ	հատ	30	900	30	ք. Երևան, Էրեբունի վարչական շրջան, Հյուսիսային 6 ՀՀ ՊԵԿ ՄԴՊՎ Շնագիտական /կենտրոն/ բաժին	30	Մատակարարում ն իրականացվում է Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում
19	33631286/1	Հակասնկային քսուք CLOTRIMAZOLE	**<< CLOTRIMAZOLE >> Ֆիրմայի** Հակասնկային քսուք արտաքին կիրառման համար Դեղաձևը-քսուք, արտաքին կիրառման-20գր.	հատ	1000	7000	7	ք. Երևան, Էրեբունի վարչական շրջան, Հյուսիսային 6 ՀՀ ՊԵԿ ՄԴՊՎ Շնագիտական /կենտրոն/ բաժին	7	Մատակարարում ն իրականացվում է Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում
20	33691144/1	Հակաալերգիկ, և քոսի դեմ միջոց Նատրիումի թիոսուլֆատ	**<<Նատրիումի թիոսուլֆատ>>** Դեղամիջոցը կիրառվում է հակաբորբոքային, հակամանրազերծիչ, դետոքսիզացիա, անզգայացնող, հակաքոսային կանխարգելման համար: Դեղաձևը-լուծույթ ներարկման-5մլ	հատ	60	1800	30	ք. Երևան, Էրեբունի վարչական շրջան, Հյուսիսային 6 ՀՀ ՊԵԿ ՄԴՊՎ Շնագիտական /կենտրոն/ բաժին	30	Մատակարարում ն իրականացվում է Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում
23	33671135/1	Հակաբորբոքային, հակաալերգիկ, հեմոստատիկ միջոց Կալցիումի քլորիդ 10%	**<<Կալցիումի քլորիդ 10%>>** Դեղամիջոցը լրացնում է կալցիումի իոնների պակասությունը, որոնք անհրաժեշտ են նյարդային ազդակների փոխանցման, սրտի գործունեության, ոսկրերի ձևավորման, արյան մակարդման համար: Դեղաձևը-լուծույթ, ներարկման-5մլ	հատ	40	800	20	ք. Երևան, Էրեբունի վարչական շրջան, Հյուսիսային 6 ՀՀ ՊԵԿ ՄԴՊՎ	20	Մատակարարում ն իրականացվում է Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված

								Շնագիտական /կենտրոն/ բաժին		20 օրացուցային օրվա ընթացքում
26	33661170/1	Տեղային անզգայացման միջոց NOVOKAIN 0. 5%	**<<NOVOKAIN 0. 5%>>** Միջոցը կիրառվումէ ինֆիլտրացիոն, հաղորդչական, էպիդուրային և ողնուղեղային անզգայացման համար: Այն նվազեցնում է մեմբրանների թափանցելիությունը նատրիումի իոնների համար՝ կանխելով գործողությունների ներուժի առաջացումը և ցավի իմպուլսի անցկացումը: Դեղաձևը-լուծույթ, ներարկման-5մլ	հատ	35	1750	50	ք. Երևան, Էրեբունի վարչական շրջան, Հյուսիսային 6 ՀՀ ՊԵԿ ՄԴՊՎ Շնագիտական /կենտրոն/ բաժին	50	Մատակարարում ն իրականացվում է Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում
29	33621340/2	Անալեպտիկ, կարդիոտոնիկ, հոգեբանականաց նող միջոց Կոֆեին, նատրիումի բենզոնատ	**<<Կոֆեին, նատրիումի բենզոնատ>>** Դեղամիջոցն անմիջական խթանող ազդեցություն ունի կենտրոնական նյարդային համակարգի վրա. Այն կարգավորում և ուժեղացնում է ուղեղի աշխատանքը, շնչառական և հոդաշարժական գործընթացները, ակտիվացնում է դրական պայմանավորված ռեֆլեքսները և շարժիչային ակտիվությունը: Խթանում է մտավոր գործունեությունը, մեծացնում է մտավոր և ֆիզիկական կատարողականությունը Դեղաձևը-լուծույթ, ներարկման-1մլ	հատ	50	1000	20	ք. Երևան, Էրեբունի վարչական շրջան, Հյուսիսային 6 ՀՀ ՊԵԿ ՄԴՊՎ Շնագիտական /կենտրոն/ բաժին	20	Մատակարարում ն իրականացվում է Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում
33	33661119/1	Ցավազրկող միջոց ANALGIN	**<<ANALGIN>> Ֆիրմայի** ցավը հանգստացնող, ջերմությունն իջեցնող և հակաբորբոքային դեղանյութ: Նշանակվում է նյարդացավերի, մկանային և նյարդային հյուսվածքների բորբոքումների, ինչպես նաև բարձր ջերմությամբ ընթացող հիվանդությունների դեպքում: Դեղաձևը:լուծույթ, մ/մ և ն/ե ներարկման-2մլ	հատ	40	1200	30	ք. Երևան, Էրեբունի վարչական շրջան, Հյուսիսային 6 ՀՀ ՊԵԿ ՄԴՊՎ Շնագիտական /կենտրոն/ բաժին	30	Մատակարարում ն իրականացվում է Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում
34	33691138/1	Դեզինտոքսիկացո իոն միջոց 1 Գլյուկոզ 40%	**Գլյուկոզ 40%** Դեղամիջոցը նախատեսված է էլեկտրոլիտ բալանսի վերականգման համար Դեղաձևը-լուծույթ, ն/ե ներարկման-5մլ	հատ	50	1500	30	ք. Երևան, Էրեբունի վարչական շրջան, Հյուսիսային 6 ՀՀ ՊԵԿ ՄԴՊՎ Շնագիտական /կենտրոն/ բաժին	30	Մատակարարում ն իրականացվում է Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում
36	33631270/1	Հակամիկրոբային, հակասեպտիկ միջոց Ադամանդյա կանաչ 1% սպիրտային լուծույթ (Зеленка)	**Ադամանդյա կանաչ 1% սպիրտային լուծույթ (Зеленка)** Հակամիկրոբային, հակասեպտիկ միջոց Դեղաձևը: լուծույթ (solution), արտաքին օգտագործման համար-10մլ	հատ	200	4000	20	ք. Երևան, Էրեբունի վարչական շրջան, Հյուսիսային 6 ՀՀ ՊԵԿ ՄԴՊՎ Շնագիտական	20	Մատակարարում ն իրականացվում է Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում

								/կենտրոն/ բաժին		
37	33631260/1	Հակամիկրոբային, հակասեպտիկ միջոց Յոդին 5% սպիրտային լուծույթ	**Յոդին 5% սպիրտային լուծույթ** Հակամիկրոբային, հակասեպտիկ միջոց Դեղաձևը: լուծույթ (solution), արտաքին և ներքին օգտագործման համար-30մլ	հատ	250	5500	22	ք. Երևան, Էրեբունի վարչական շրջան, Հյուսիսային 6 ՀՀ ՊԵԿ ՄԴՊՎ Շնագիտական /կենտրոն/ բաժին	22	Մատակարարում ն իրականացվում է Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում
38	33141141/1	Երակային կատետր 22G ANGELTOUCH	**<<ANGELTOUCH>> ֆիրմայի** Բժշկական սարքավորումը նախատեսված է դեղերի երկարատև օգտագործման և ներարկման համար, իր լրացուցիչ թևիկներով Չափսը- 22G	հատ	180	5400	30	ք. Երևան, Էրեբունի վարչական շրջան, Հյուսիսային 6 ՀՀ ՊԵԿ ՄԴՊՎ Շնագիտական /կենտրոն/ բաժին	30	Մատակարարում ն իրականացվում է Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում

Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացվում է մատակարարի կողմից

****Տեխնիկական բնութագրով պահանջվող ապրանքները մատակարարման պահին պետք է լինեն ժամկետի մեջ և պետք է ունենան առնվազն 12 ամիս պիտանելիության ժամկետ***

- **Գնումների մասնակցության իրավունքը և որակավորման չափանիշները՝ համաձայն գործող օրենսդրության:**
- **Հայաստանի Հանրապետության կառավարության N 526-Ն որոշման 23-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ գնման ընթացակարգը տեսակարար կշռով որակվել է որպես ապրանք:**

ԳՆՈՐԴ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք.Երևան, Մ. Խորենացի 3,7
ՀՎՀՀ 02647057
Հ/Հ 900011054013
ՀՀ ՖՆ գանձապետական գործադիր մարմնի գործառնական կառավարման և տեղեկատվության կենտրոն
Գլխավոր քարտուղար

Է. Գևորգյան _____
/ստորագրություն/ Կ.Տ/

ՎԱՃԱՌՈՂ
Ա/Ձ «Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի»
ք. Երևան, Կոմիտասի պող. 56-46
Այդի բանկ» ՓԲԸ
Հ/Հ 11813012607100
ՀՎՀՀ 20179887
Տնօրեն

Դ. Հովհաննիսյան _____
/ստորագրություն/ Կ.Տ/

Հավելված N 2
« 5 » Հոկտեմբեր 2020թ. կնքված
ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-20/027/1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին՝ ըստ ամիսների, այդ թվում**			
				հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**
2	33631281/3	4266	Ականջի և աչքի Կաթիլներ FLOXADEX	16,100	16,100	16,100	**16,100**
5	33631281/6	4266	Վերականգնողական քսուք SOLCOSERYL 20գ	11,500	11,500	11,500	**11,500**
6	33631281/7	4266	Հակաբորբոքային քսուք LEVOMIKOL	11,500	11,500	11,500	**11,500**
7	33631281/8	4266	Վերականգնող միջոց ACTOVEGIN	16,100	16,100	16,100	**16,100**
8	33641220/1	4266	Հորմոնալ միջոց էգ շների համար LAKTO-STOP	60,000	60,000	60,000	**60,000**
9	33611341/1	4266	Իմունային համակարգը վերականգնող միջոց ՎԻՏԱՄԻՆ Բ ՀԱՄԱԼԻՐ	12,600	12,600	12,600	**12,600**
10	33611341/2	4266	Արտանոթային և նյարդային համակարգը կարգավորող միջոց ՎԻՏԱՄԻՆ Բ1	1200	1200	1200	**1200**
11	33611341/4	4266	Նյութափոխանակությունը կարգավորող միջոց ՎԻՏԱՄԻՆ Ց	2400	2400	2400	**2400**
12	33141164/1	4266	Արյունահոսությունը կանխող միջոց VIKASOL	4500	4500	4500	**4500**
16	33631284/2	4266	Հակաալերգիկ միջոց DEXAMETAZONE	5000	5000	5000	**5000**
17	33631284/3	4266	Հակաալերգիկ միջոց TAVEGYL	18,000	18,000	18,000	**18,000**
18	33631284/4	4266	Հակաալերգիկ և քնաբեր միջոց DIMEDROL	900	900	900	**900**
19	33631286/1	4266	Հակասնկային քսուք CLOTRIMAZOLE	7000	7000	7000	**7000**
20	33691144/1	4266	Հակաալերգիկ, և քոսի դեմ միջոց Նատրիումի թիոսուլֆատ	1800	1800	1800	**1800**

23	33671135/1	4266	Հակաբորբոքային, հակաալերգիկ, հեմոստատիկ միջոց Կալցիումի քլորիդ 10%	800	800	800	**800**
26	33661170/1	4266	Տեղային անզգայացման միջոց NOVOKAIN 0. 5%	1750	1750	1750	**1750**
29	33621340/2	4266	Անալեպտիկ, կարդիոտոնիկ, հոգեբանականացնող միջոց Կոֆեին, նատրիումի բենզոնատ	1000	1000	1000	**1000**
33	33661119/1	4266	Ցավազրկող միջոց ANALGIN	1200	1200	1200	**1200**
34	33691138/1	4266	Դեզինտոքսիկացոիոն միջոց 1 Գլյուկոզ 40%	1500	1500	1500	**1500**
36	33631270/1	4266	Հակամիկրոբային, հակասեպտիկ միջոց Ադամանդյա կանաչ 1% սպիրտային լուծույթ (Зеленка)	4000	4000	4000	**4000**
37	33631260/1	4266	Հակամիկրոբային, հակասեպտիկ միջոց Յոդին 5% սպիրտային լուծույթ	5500	5500	5500	**5500**
38	33141141/1	4266	Երակային կատետր 22G ANGELTOUCH	5400	5400	5400	**5400**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ԳՆՈՐԴ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք.Երևան, Մ. Խորենացի 3,7
ՀՎՀՀ 02647057
Հ/Հ 900011054013
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
Գլխավոր քարտուղար

Է. Գևորգյան _____
/ստորագրությունը/Կ.Տ/

ՎԱՃԱՌՈՂ
Ա/Ձ «Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի»
ք. Երևան, Կոմիտասի պող. 56-46
Այդի բանկ» ՓԲԸ
Հ/Հ 11813012607100
ՀՎՀՀ 20179887
Տնօրեն

Դ. Հովհաննիսյան _____
/ստորագրությունը/ Կ.Տ/

Հավելված N 3
« 5 » Հոկտեմբեր 2020թ. կնքված
ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-20/027/1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ_____
հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 3.1
« 5 » Հոկտեմբեր 2020թ. կնքված
ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-20/027/1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն